# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ

ՀԵԼՍԻՆԿԻ, 14 դեկտեմբերի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի՝ այստեղ կայացած սեսիայում ընդունվեց դիմում, որի տեքստում ասվում է.

### Դ Ի Մ Ո Ւ Մ

*Չորս տերությունների կառավարությունների ղեկավարները Ժնևում գտան, որ միջազգային տարաձայնությունները կարող են կարգավորվել բանակցությունների միջոցով։ Նրանք գտան, որ պետք է հրաժարվել սպառնալիքներից և ուժ գործադրելուց։ Նրանց միջև կայացված համաձայնությունը ժողովուրդների ներգործուն կամքի արդյունքն էր։ Դա ծնունդ տվեց Ժնևի ոգուն։*

*Այդ ոգով կարող էին լուծվել Արտաքին գործերի մինիստրների խորհրդակցության քննարկմանը ներկայացված պրոբլեմները։ Խորհրդակցությունը չկատարեց այն խնդիրները, որ նրան առաջադրել էին կառավարությունների ղեկավարները, և չարդարացրեց ժողովուրդների հույսերը։ Սպառազինությունների մրցավազքը, որը, չնայած միջազգային հարաբերությունների լարվածության թուլացմանը, շարունակվում է, չորս մեծ տերությունների բանակցությունների հաջողության հիմնական խոչընդոտն է։*

*Մինչդեռ համաձայնությունը, որը սկիզբ կդներ զինաթափմանը, եղել ու մնում է հնարավոր։ Դա ցույց տվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի աշխատանքը։ Այդպիսի համաձայնությունը կնախատեսեր սպառազինությունների կրճատում, միջուկային զենք չգործադրելու պարտավորություն, միջուկային զենքի փորձարկումների արգելում և էֆեկտիվ վերահսկողություն այդ միջոցառումների իրականացման նկատմամբ։ Առաջարկվում էին սպառազինությունների նկատմամբ վերահսկողության տարբեր մեթոդներ։ Այդ մեթոդները կարող են կիրառվել զինաթափման առաջին միջոցառումների նկատմամբ։*

*Զինաթափում իրագործելու հույսը մարդկանց սրտերում չի կարելի ոչնչացնել։ Մարդիկ գիտեն, որ նրանք հնարավորություն ունեն հանգիստ ապրելու, որ գիտական հայտնագործությունները կարող են նրանց ազատել կարիքի ու սովի ահեղ ուրվականից, ապահովել նրանց բարեկեցության աճը։*

*Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոն բոլոր երկրների մարդկանց կոչ է անում գործել և զանազան քայլեր անել սպառազինությունների մրցավազքը կանգնեցնելու և սպառազինությունների կրճատման ու ատոմային զենքի արգելման առաջին համաձայնություններին հասնելու համար։*

*Տարբեր տեսակետների արտահայտման և բոլոր ջանքերի լրիվ ծավալման հնարավորություն տալու համար բյուրոն 1956 թվականի ապրիլի 5—9-ը հրավիրում է Խաղաղության Համաշխարհային խորհրդի արտակարգ սեսիա՝ նվիրված զինաթափման և միջուկային զենքի արգելման պրոբլեմներին։*

*խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոն հավանում է այդ սեսիայի աշխատանքին մասնակցել և այնտեղ իրենց կարծիքներն ու առաջարկները ներկայացնել բոլոր նրանց, ում անհանգստացնում է սպառազինությունների մրցավազքը և ով ցանկանում է վերջ տալ դրան՝ ազգային և միջազգային կազմակերպություններին ու շարժումներին, գիտնականներին, որոնք կարող են հատուկ ավանդ մուծել այդ պրոբլեմների լուծման գործում, աշխատավորներին, որոնց ուսերին այնպես ծանր կերպով ընկած է սպառազինությունների բեռը, բոլոր նրանց, ովքեր հանուն իրենց կրոնական կամ քաղաքական սկզբունքների դատապարտում են պատերազմը։*

*Սպառազինությունների կրճատման ճանապարհին ամեն մի քայլ թույլ կտա զինաթափման նոր միջոցներ ձեռնարկել։ Այդ ճանապարհին ամեն մի քայլ կնպաստի վստահության վերականգնմանը և վիճելի հարցերի կարգավորմանը։ Այդ ճանապարհին ամեն մի քայլ կմոտեցնի այն ժամը, երբ անվստահության ու սարսափի տեղը կգրավի բոլոր երկրների խաղաղ համագործակցությունը, բոլոր ժողովուրդների եղբայրությունը։*

Հելսինկի, 13 դեկտեմբերի 1955 թ.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈ

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 16 դեկտեմբերի 1955 թ.)

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

*Դեկտեմբերի 7-ին և 9-ին ակադեմիկոս Դ. Վ. Սկոբելցինի նախագահությամբ տեղի ունեցան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը։*

*Կոմիտեն քննարկեց ընթացիկ տարվա համար Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին ստացված առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի վերաբերյալ։*

*Ստորև հրապարակվում է կոմիտեի որոշումը «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» 1955 թվականի Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին։*

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1955 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1955 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

*Խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարում աչքի ընկնող ծառայությունների համար՝ «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց.*

ԼԱԶԱՐՈ ԿԱՐԴԵՆԱՍԻՆ— *Մեքսիկայի նախկին պրեզիդենտ.*

ՇԵՅԽ ՄՈՒՀԱՄԵԴ ԱԼ-ԱՇՄԱՐԻՆ— *հասարակական գործիչ* (Սիրիա).

ՅՈԶԵՖ ՎԻՐՏԻՆ— *Գերմանիայի նախկին ռայխականցլեր* (Գերմանական Ֆեդերալ Ռեսպուբլիկա).

ՏՈՆ ԴԻԿ ՏԽԱՆԴԻՆ— *Վիետնամի Հայրենական ճակատի ազգային կոմիտեի նախագահ.*